և կարտինալ Փէթրան այս բանի վերայ բարկացաւ, բայց դալիանի փուլիթիքայով առանց արտաքսապէս ցոյց տալով. այն օրերն Սուքիաս Վ. փոքր ինչ տկարութիւն ունէր. լսելով այս խապարն, սաստկացաւ տկարութիւնն նորին, մանաւանդ ջրվաթի կողմանէ անկաւ ի հոգևարութիւն. գնացի տեսանել զնա. մառօնիք չրջապատեալ էին զնա. ի Հայոց ոչ ոք կայր անդ. Պատրիարքն եւս հանդերձ քահաննայուք գնաց հայցել զնա առաջ քան մեռանիլն կտակ առաւ փոօփականտան վառիս (?) և անդ թաղվիլ և կարտինալ փէթրան վէքիլ. պատրիարքն գնաց ի թաղումն նորին հանդերձ եպիսկոպոսօք և քահանայիւք. թէպէտ քահանայի կարգիւ մեռաւ, բայց թաքով իբր եպիսկոպոս արարին զթաղումն նորին. ետ իւրոյ մահվան ոմանք ասին և խոսեցան թէ նախատինքն և տրտմութիւնն ըշտապեցոյց նմա զմահն իւր. բազումք կարծէին թէ շատ փող ունիցեր, բայց ընդ ամէնն հազիւ հազար ուսկութ հասանի. և մեր եկեղեցնայ ոչ ինչ թողաւ։ Եւ երկրորդ պատճառն ասիմանին հակառակութեան այս է. Ջ. ամիս առաջ խապար եկաւ թէ մառօնոց պատրիարքն վաղճանել է և եպիսկոպոսք երկու ֆոխա եղեալ Բ պատրիարք արարեալ են. և երկու զանազան էլչի յղեալ են փափին խնդրելով զհաստատութիւն. և փափն ետ քննելոյ զբանն ոչընչացոյց զերկուսին զընտրողութիւնն և երրորդ ոմն ասկան ասիմանին անուանեաց Պատրիարք. ետ անուանելոյն հարցոյց մեր Պատրիարքին զորպիսութիւնն այս երրորդ անձին, և պատրիարքն մտածելով թէ հարկաւոր է ամենայն ոք մեծաւորաց մանաւանդ փափին զճշմարիտն ասել, ծանուցեր է թէ ընտրեալ եպիսկոպոսն բարի և խոհեմ մարդ է, բայց թու[ր]քծած եղբայր մի ունի յոյժ չար և բազում վնասս հասուցեալ է ազգին և աթոռոյն. և այս թուրքն առաւել մերձակայ ազգական է ասիմանին, որոյ ականճն հասանելով, բովանդակ սէրն և քաղցրութիւնն դառն առելութիւն արար ընդդէմ պատրիարքին. այս բանին յայտնվիլն և տարածիլն ի մէջ ֆռանկաց յոյժ նախատինք և անուան պակասութիւն եղեւ ասիմանին, որոյ աղաքաւ դառնացեալ բորբոքեցաւ ընդդէմ պատրիարքին, թէպէտ սա վերոյասացեալ պատահմանց ոչ խոովեցաւ։ Այլ Հալպու խապարն յոյժ տրխրեցոյց զինքն՝ ըստ այսմ ամենայնի ոչ համարձակեցաւ փափէն օգնութիւնս խնդրել կամ հրաման առ ի առաքել Սահակ եպիսկոպոսն մուրալ յերկիրն քրիստոնէից, որպէս ըսկիսբն ունէր դիտաւորութիւն. թէպէտ բազում յանձնարարական գրերս ետուն իւրեան. նախ քան զզվելն խնդրեց հրաման փափէն առ ի տանել ընդ ինքեան զօմանս անձինս, և փափն օժարութեամբ հաճեցաւ. վասն որոյ ակամայ կամօք տարաւ ընդ ինքեան զինէոս եպիսկոպոսն, որ ոչ կամէին գնալ, նմանապէս իւր աշակերտ տէր Նիկողայոսն. զսա յոյժ բարուրք արաւ տանելն. եթէ տեղս մնար մեծամեծ խառնակութիւնս աներ վասն անմահացուցեալ բնութեան իւրոյ. փափն բաց ի այն 300 ուսկութէն աւելի փող չի տվաւ իւրեան. միայն թէ 318 ամսվան բարթ իւր և սահակ եպիսկոպոսին փէշին տվին, քանի որ քրիստոնէին հողն են կերակրին հանդերձ իւրայնովք. տեղս իւրեան վէքիլ չի թողաւ, որպէս ունին այլ Պատրիարքունս։ Վերջապէս աստուած բարի ճանապարհ տայցէ և օգնական լիցի այս վեհալուսէր Պատրիարքին, զի մեծ աշխատաւոր և արդիւնաւոր է վասն ուղղափառ հաւատի, ինքն բարի վարուք արաքինասէր մանաւանդ յոյժ խոնարհ։

Աիկուռնայու գիր եկաւ իւրմէն. բարեպէս հասեր է անդ հանդերձ ընդ իւր եղեալ անձամբք...։

Խոնարհագոյն որդի և ծառայ
[պատկերահան] Յոհաննէս

Ամի տեառն 1743, Օգոստոսի 3
[ի Հռովմ]

## ՃԻԲ.

Հրաժեշտ առած է այլեւս Աբրահամ Պատրիարք Հռովմէն։ Անոր բաժանումն այսպէս կը տեղեկացրուի Կարապետ անուն անձէ մը առ Մխիթար. « ի յուլիսի 11ին « զկնի զԳ ժամուն աւուր հինգշաբթէի, ճանապարհեցաւ աստի Գ արապայով Գեր-